

## ՍԱՐԵԱՆԸ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ. 1924 թ.

1924 թ. վենետիկի ժԴ միջազգային ցուցահանդէսը կամ, ինչպէս ընդունուած է ասել, վենետիկեան Բիենալէն նշանակալի եւ աննախաղէպ իրադարձութիւն էր Ռուսաստանի եւ մանաւանդ Հայաստանի համար, որի արուեստը առաջին անգամ պէտք է ցուցադրուէր Եւրոպայում:

Սկսած 1895 թ., երբ վենետիկի ամենագեղատեսիլ վայրերից մէկի՝ Զարդինի Պուրլիչի տարածքում խոյացաւ առաջին ցուցահանդէսային պալատը, վենետիկեան բիենալէները ձեռք բերեցին կայուն եւ համաեւրոպական ճանաչում թէ՛ աշխարհի տարրեր երկրների արուեստի գործերի ընդգրկմամբ, թէ՛ այցելուների քանակով: Երկու տարին մէկ կազմակերպուղ այս ցուցահանդէսները լայնօրէն լուսաբանում էին մամուլում, հրատարակում էին նրանց նույրուած գեղարուեստական ամսագրերի յատուկ համարներ եւ մենագրութիւններ: Տարէցտարի անում էր գնողունակ այցելուների հետաքրքրութիւնը այդ լիրաւի միջազգային դարձած «արուեստի տօնավանառի» հանդէպ: Տարիների ընթացքում Զարդինի Պուրլիչի տարածքում իրենց մշտական տաղաւարներն են կատուցում Ֆրանսիան, Անգլիան, Հոլանդիան, Խապանիան, Գերմանիան, Բելգիան, Հունգարիան եւ Ռուսաստանը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բիենալէների գործունէութիւնն ընդհատուեց մինչեւ 1920 թ.: Այդ տարի ոռուսական տաղաւարը յատկացուեց ոռու տարագիր նկարիչներին եւ միայն 1924 թ. իտալիայի կողմից Սովետական Միութեան պաշտօնական ճանաչումից յետոյ, հնարաւոր դարձաւ Ռուսաստանի մասնակցութիւնը Բիենալէին: Տասը տարուայ ընդմիջումից յետոյ Եւրոպայում պէտք է ներկայացուէր նոր յեղափոխական Ռուսաստանի արուեստը, ինչն, ի հարկէ, մեծ պատասխանատուութիւն էր պահանջում ցուցահանդէսի ռուսական բաժնի կազմակերպիչներից:

Ի դէպ, 1924 թ. Բիենալիի կազմկոմիտէում ընդգրկուած էին ժամանակի ռուս ճանաչուած արուեստաբանները՝ Բ. Ն. Տէրնովեցը, Յ. Ա. Տուգենհոլդը, Ա. Մ. Էֆրոսը, Վ. Ռ. Վիպակը, Գեղարուեստի ակադեմիայի պրեզիդենտ Պ. Ս. Կողանի գրիշաւորութեամբ, իսկ գեղարուեստական խորհրդի նախագահն էր Լուսժողկոմ Ա. Վ. Լունաչարսկին։ Ինչպէս գրում է Տէրնովեցը 1924 թ. Հրատարակած «արուեստի ԽIV Միջազգային ցուցահանդեսը Վենետիկում» յօդուածում. «Մենք է ձգտէինք առաջին հերթին հաւաստել մեզ մօտ բարձրորակ արուեստի գոյութեան փաստը»ի [...] եւ այն, որ «չնայած սովի եւ պատերազմական տարիների ծանրացուցիչ հետևանքների, արուեստը Ռուսաստանում շարունակում էր ապրել, զարգանալ եւ առաջ բերել երիտասարդ նոր տաղանդներ»<sup>1</sup>:

**ԺԴ. միջազգային Բիենալիկում Սովետական Միութեան արուեստը ներկայացնում էին միայն երկու հանրապետութիւն՝ Ռուսաստանն ու Հայաստանը:**

Հայաստանի Լուսժողկոմին՝ Ասքանազ Մուսեևանին ուղղուած իր նամակում (1924 թ., յունիսի 23, Վենետիկ)<sup>2</sup> Մարեանը գրել է. «Մենք Մոսկովյացից ոչ մի հրաւեր չենք ստացել, իսկ հրաւերն եկել էր Անդրկովկասեան ներկայացուցչից Խոալիայում»։ Այդ ներկայացուցիչը Պօղոս Մակինցեանն էր՝ Մարեանի վաղեմի ընկերը եւ նրա արուեստի երկրպագուն։ Լուր առնելով Վենետիկում կազմակերպուելիք միջազգային ցուցահանդէսի մասին, Հայաստանի մասնակցութեան հարցը քննարկութեան է դրում Կերպարուեստի աշխատողների ընկերութեան ժողովում եւ դրական լուծում ստանում։ Մ. Մարեանին լիազօրում են ներկայացնել Հայաստանը ցուցահանդէսի մուկովեան կազմկոմիտէի հետ բանակցութիւններում։

1924 թ. ապրիլի 16-ին Մարեանը մեկնում է Մոսկով՝ կազմակերպչական հարցերը լուծելու նպատակով, Մուսեևանին ուղղուած մայիսի 5-ի նամակում նա տալիս է հետեւեալ տեղեկութիւնը. «Մինչեւ հիմա մեր գործերը լաւ են գնում։ Մեր 25 նկարներից, որ ներկայացրինք, 20-ը գնում են վենետիկ։

<sup>1</sup> Բ. Ի. Տերնովեց. Պисьма. Дневники. Статьи, М. 1977, էջ 158-159. Այսուղեւ էնտակայում մէջ է բերում թարգմանարար։

<sup>2</sup> Ասքանազ Մուսեևանին ուղղուած Մարեանի նամակները պահպանում են ՀՀ Հասարակական եւ քաղաքական փաստաթղթերի կենարոնական պետական արխիւում (Փօնդ 4010, ցուցակ 1, գործ 64, թթ. 1-8)։

Մ. Սարեան 12, Եղ. Թադեւսոսեան 1, Վ. Սուրենեան 2, Փ. Թերլեմեզեան 1, Ա. Առաքելեան 2, Տարագրոս 2: Զընդունուած նըկարները հետեւեալներն են. Սուրենեանց 2, Թադեւսոսեան 1, Առաքելեան 1, Շարքաշեան 1: Խմ նկարները մասնաւորապէս մեծ յաջողութիւն ունեն [...]:

**Այսպիսով, հայ նկարիչների մասնակցութիւնը վենետիկեան Միջազգային ԺԴ. Բիենալիչին ապահովուած էր: 1924 թ. յունիսի 1-ին Սարեանը՝ նկարիչ Պետր Կոնչարովսկու, արուեստարաններ Տէրնովեցի, Շապոշնիկովի, Տուգենհոլտի եւ ցուցահանդէսի միւս կազմակերպիչների հետ արդէն վենետիկում էր: Այնտեղից նա գրում է Մռաւեանին. «Խորիդրային ուրիշ հանրապետութիւնների բացակայ լինելը որոշ չափով դժուարացրեց մեր գործը, բայց ես կուտմ էի, եւ վերջ ի վերջոյ յաջողուեց մեզ ստանալ մի պատ, որի վրայ մեր բոլոր նկարները կախ տուեցի եւ կատալոգի մէջ էլ յիշուեց մեր առանձին հանրապետութեան նկարիչներ լինելը: [...] Մեր մասնակցութիւնը վենետիկում աւելի, քան մենք կարծում ենք, ունի նշանակութիւն: Հայ գաղութները ակներեւ տեսան, որ կայ Հայաստան, կայ կուլտուրա [...]»:**

Մինչեւ 1924 թուականի վենետիկեան միջազգային ցուցահանդէսը, Սարեանն իր գործերով արդէն մասնակցել էր մի քանի միջազգային ցուցահանդէսների՝ 1909 թ. Հռոմում, 1912-ին՝ Լոնդոնում, 1914 թ.-ին Շուէդիայի Մալմո քաղաքում եւ այդ ցուցահանդէսներին նա ներկայանում էր որպէս ի. դարի ռուսական նորարարական արուեստի հիմնական դէմքերից մէկը:

Վենետիկեան Բիենալէն Սարեանին հանրաւորութիւն տուեց հանդէս գալ որպէս հայ արուեստի գործիչ, ներկայացնել բազմադարեան հարուստ մշակոյթ ունեցող նոր Հայաստանի կերպարուեստը: Եւ Սարեանի ջանքերով էր, որ Բիենալիում պիտի ներկայացուէր նաև ժամանակակից հայկական կերպարուեստը, այնպէս որ Խորհրդային Միութեան հէնց առաջին տարիներից Սարեանը մեծ ներդրում ունեցաւ Հայաստանի գեղարուեստական կեանքի վերածնման, նոր մշակութային օջախների ստեղծման եւ հայ արուեստի պրոպոգանդման բնագաւառում: Գալով հայրենիք նա իր շուրջը հաւաքեց հայ մշակոյթի փայլուն գործիչների մի ամբողջ համաստեղութիւն:

Հետեւելով Սարեան մշակութային գործչի անցած ուղին՝ համարնում ես, որ Մռաւեանին ուղղուած նրա խօսքերը խորապէս ապրուած են եւ անկեղծ:

«Ես այսօր ինձ երջանիկ եմ զգում, որ իմ տարիների աշխատանքը չկորաւ եւ Հայաստանը իւր դեմքով է դուրս գալիս հաւասար ուժեղների հետ։ Կուլտուրա ստեղծելու համար պէտք է ունենիր տակ ունենալ հող, ոչ թէ անսահման տարածութիւն։ Գուցէ տարօրինակ քուայ ֆեղ այս պարուը, բայց Հայաստանում անկեղծօրէն ստեղծագործող ուրիշ կերպ չի կարող մտածել» (1924, յունիսի 23, Վենետիկ)։

**Մօտենում էր ԺԴ. միջազգային Բիենալիի բացման օրը։** Տէրնովեցը իր նամակներից մէկում գրում է. «Եռուսական տաղարը [...] բաղկացած է երեք դահլիճներից, դուք բարձրանում եք բացօթևայ աստիճաններով եւ մտնում ապակեպատ միջանցքը [...]: Միջանցքից ներս եք մտնում գրաֆիկայի սրբակը։ Մեծ դահլիճը տանող մուտքից ձեզ ողջունում են երրորդ դահլիճի գլխաւոր պատից կափուած Սարեանի նըկարների գուարը գոյները։ Դա միանգամբ բարձացնում է ձեր տրամադրութիւնը եւ ամբողջ տաղաւարին հաղորդում տօնական շնեղ մքնոլորտ»<sup>3</sup>։

Խորհրդային տաղաւարի պաշտօնական բացումից առաջ՝ յունիսի 17-ին, կայացաւ արտասահմանեան լրագրողների համար կազմակերպուած յատուկ վերնիսաժ, ուր բացման խօսք ասաց ցուցահանդէսի խորհրդային բաժնի նախագահ, գեղարուեստական գիտութիւնների պետական Ակադեմիայի պրեզիդենտ՝ Պետր Կոզանը։ Բարձր գնահատական տալով տաղաւարում ներկայացուած արուեստի գործերին՝ նա առանձին գոհունակութիւն յայտնեց Ռուսաստանի եւ Խոալիայի միջեւ մշակութային կապերի վերահաստատման համար։

Սարեանի արխիւում պահպանւում է Հայաստանի ժողկոմ-խորհի քարտուղար Լուկաշինին ուղղուած Կողանի հետագրի պատճէնը, ուր մասնաւորապէս ասուած է. «Յունիսի 17-ին տեղի ունեցաւ Սովետական հանրապետութիւնների տաղաւարի վերնիսաժը։ Ներկայ էին իտալական, երոպական թերթերի բազմարի ներկայացուցիչներ։ Հայկական բաժինը, եւ մանաւանդ Սարեանի նըկարները, մեծ ուշադրութեան արժանացան»։ Տէրնովեցի նամակներում նոյնպէս նշուում է Սարեանի նկարների առաջ բերած մեծ հետաքրքրութիւնը. «Բացի իտալական լրագրողներից կային նաև մի քանի ամերիկուիհներ, որոնց ուղղակի ցնցուած էին Սարեանով եւ սուպերնմատիստներով։ Նը-

<sup>3</sup> Բ. Տէրնովեցի նոյն գրքի՝ էջ 151։

բանի Սարեանի վրայ թափեցին հարցերի մի տարափ, որոնց նա պատասխանում էր կամաւոր թարգմանիչների օգնութեամբ»<sup>4</sup>:

Երկու օր յետոյ՝ յունիսի 19-ին, Բիենալէռում տեղի ունեցաւ ՍՍՀՄ տաղաւարի պաշտօնական բացումը, որն անցաւ մեծ շուքով: Ինչպէս մանրամասն նկարագրում է ժամանակի մամուլը, բացմանը ներկայ էին Վենետիկի պաշտօնեայ անձինք, գիտնականներ, նկարիչներ, անուանի կոլեցիոներներ: Տաղաւարի դիմացի հարթակը լեփ-լեցուն էր չքեղ հագնուած կանանցով եւ պատուաւոր հիւրերով: Զարդինի Պուրլիչի նաւակայանում պատուվ դիմաւորեցին մոտորային նաւակով ժամանած Սովետական Միութեան դեսպան Կ. Կ. Խրենեւին՝ իր տիկնոջ հետ: Երբ զեսպանը ոտք դրեց դէպի ոռուական տաղաւար տանող աստիճանները, շէնքի գլխին ծածանուեց կարմիր զրօշը: Տաղաւարի բացման արարողութիւնը նկարահանուել է:

Այդ օրը մեծ ուրախութիւն պարգևեց շուրջ չորս տարի վենետիկում ապրող եւ հայրենիքն անչափ կարօտած Աւետիք իսահակեանին, որը մինչ տաղաւարի բացումը բազմից այցելել էր այն եւ հիմա յուղուած սպասում էր, թէ ինչպէս կընկալուի Հայաստանի, մանաւանդ Մ. Սարեանի արուեստը հարիւրաւոր օտար այցելունների կողմից:

«Ես պահիլոնում կանգնել էի Մ. Սարեանի նկարների մօտ, - գրում է Աւ. Խսահակեանը իր ակնարկում, - ուզում էի լսել այցելողների կարծիքները, նրանց տպաւորութիւնների արտայայտութիւնները: Ես խօսում էի ինքս ինձ հետ. - «Սարեանը Հայաստանի պեյզաժների, բնութեան վառ երանգների երգիչն է, արդեօք ի՞նչ են զգալու օտարները»: Ես յուզուած էի եւ անվերջ կրկնում էի մտիս մեջ՝ Հայաստանի երգիչն է, Հայաստանի երգիչն է: Ահա մօտենում է երկու տիկինների հետ Վենետիկում բնակուող գերմանացի անուանի նկարիչ Զիմելը: Կանգնեց Սարեանի նկարների առջեւ. «ԱՇ սա հետաքրքիր է, հետաքրքիր գործեր են, թարմ է, նոր գեղեցկութիւն է ինձ համար, ուրոյն կոլորիտ ունի, տեսնան ի՞նչ երկրից է...»: Ես մղուեցի դէպի նա: «Արմենիա», - ասացի ես ներքին հպարտութեամբ: «Չե՞ր գործերն են», - հարցրեց տիկիններից մեկը: «Ո՛չ, իմ ընկերոջն է Մարտիրոս Սարեան», - պատասխա-

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 154:

նեցի ես: «Նկարիչ Զիմելը մի անգամ էլ նայեց նկարներին եւ դարձաւ ինձ, ժպտալով. - «Ես սիրեցի ձեր Արմենիան»<sup>5</sup>:

Այսպիսի խանդավառութեամբ էին ընկալում վենետիկեան ցուցահանդէսին ներկայացուած Սարեանի բնապատկերները, թէ հայերի, թէ օտարերկրացիների կողմից: Նրա «Հայաստանը», «Գունագեղ բնանկարը» - Հայաստանի բնաշխարհի սինթեզն են, խտացումը, համայնապատկերը, ժամանակակից արուեստի միջոցներով արտայայտուած հայոց երկրի ամրողական, վառ եւ զուտ ազգային կերպարը: 20-ական թուականներին սարեանական բնապատկերներում սկսում են իշխել էպիկական մօտիւները եւ մոնումենտալ ձեւերը: Գոյնի միջոցով է Սարեանը կառուցում իր բնապատկերների տարածքային պլանները, ծաւալները, օդային պերսպեկտիվան: Պատկերելով ոչար տեսանելի օրյեկտներ՝ Սարեանը միաժամանակ ձգտում է դրանց քնարական ընդհանրացմանը:

«Հայաստան» նկարը, որը Պետթատրոնի յայտնի վարագոյրի տարրերակներից մէկն է, խտացումն ու համադրութիւնն է հայոց բնաշխարհի: Հեռւում երեւում է Մասիսը, յետոյ՝ Արագածը, Արայի լեռը, կտաւի երկու կողմից բազալտէ սիւնաձեւ ժայռերը իրենց մէջ են պարփակում վառ գոյներով յագեցած դաշտերն ու հովիտները, արտերն ու անտառները, քարափներից մէկի վրայ խոյանում է մի հին եկեղեցի, իսկ գիւղական տան հարթ կտուրին շուրջպարի են բռնուել հայ աղջիկները: Եւ այս ամէնի վրայ իշխում է ներդաշնակութիւնն ու անդորրը: Մ. Սարեանի «Հայաստան» բնանկարը դարձաւ մեր երկրի իւրօրինակ խորհրդանիշ-պատկերը:

Համեմատելով Հայաստանի ու Բուալիայի յեռները՝ Սարեանը գրում է. «Խոտպիայի լեռները շատ բարձր չեն եւ ծածկուած են այգիներով, արտերով, կանաչով: Այստեղ բնութիւնը այնպիսի խելացնորութիւն չի արել, ինչպէս մեզ մօտ կովկասում, որտեղ շարդել, իքարից բաժանել եւ ծեան զծից վեր է շպրտել հսկայական լեռնակոյտերը, ստեղծել փրփրալից գետեր ու ջրվէժներ, գլխապտոյտ խորիորատներ, կիրճներ ու հովիտներ»<sup>6</sup>:

<sup>5</sup> Ա.Ի.ԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ, Արուեստի մասին, է. 1977, էջ 117:

<sup>6</sup> ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ, Գրառումներ իր կեանից, է. 1966, էջ 173:

Յուցահանդէսում ներկայացուած միւս կտաւը՝ «Լեռնային ընանկարն» է. հայոց բնաշխարհի լեռների պատուականաչ, մուգ կանաչ զանգուածներ հորիզոնի գծից իջնում են դէպի գոյնըգոյն հանդերն ու դաշտերը, որտեղ հայ գիւղացին զրադուած է իր առօրեայ գործով՝ եզներն ու գոմէշները լծած հերկում է հողը:

«Լեռնային բնանկարին» յաջորդում է «Երեւան» կտաւը, աշնանային վաս գոյներով, ոգը յագեցած է արեւի լոյսով, կըտափի խորքից կարծես ջերմութիւն է ճառագում, ոսկեզօծ ծառերը ներդաշնակում են հին Երեւանին այնքան բնորոշ հարթ տանիքներով տներին: Նկարի վերին մասի երկու անկիւններում երկնքի կապոյտի մէջ են միրճւում նարնջին տուող տուֆակերտ մի նոր շինութիւն եւ մի հին եկեղեցու սլացիկ գմբէթ: Կտաւի առաջին պլանում՝ ջրով լի կժերի ծանրութեան տակ կրուած երկու կին, այծիկի ուղեկցութեամբ, քայլում են Երեւանի հին փողոցով:

Կանգ առնենք Բիենալէում ցուցադրուած Սարեանի երեք դիմանկարներից մէկի՝ նրա պորտրետային ժանրի գլուխգործոց «Եղիշէ Զարենցի դիմանկարի» վրայ:

Զարենցը պատկերուած է մուգ կապոյտ աստղապարդ պատառի ֆօնի վրայ: Նրա դէմքի բնորոշ դիմագծերը՝ մեծ քիթը, ցցուած այտերը, բերանի անհանդիստ գծադիրը, լուսաւորուած են ներքին կրակով, որը ճառագում է բանաստեղծի իմաստուն, սեւեռուն աչքերից: Բանաստեղծի անհանդիստ պորթկուն խառնուածքը կարծես հաւասարակշռուած է յաւերժութիւնը խորհրդանշող եգիսխուական դիմակի հանդարտ հայեացքով, ինչը աւելի է ընդգծում Զարենցի անսանձ տեմպերամենտը եւ մտքի մըշտական աշխատանքը:

Աւետիք իսահակեանը յիրաւի առաջիններից մէկն էր, որ մանրամասնօրէն վերլուծելով Սարեանի ստեղծագործութիւնները իր «Հայաստանի նկարիչները Վենետիկիան միջազգային պատկերահանդէսում» եւ «Սարեանը ամբողջ աշխարհինն է» յոդուածներում տուեց խորը եւ արժէքաւոր գնահատական նրա արուեստին: Նա գրում է. «Երբ նայում եմ նրա նկարներին, մի անհուն սիրով ու կարօտով ե լցում ձեր հոգին դէպի հայ աշխարհը՝ «արեւի տակ պարզուած հելիար»», մի խորին բնաբերգութիւն, իր չքնաղ լեռներով ու գետերով, արտերով ու եղիներով, պաշտելի հայ գիւղացիով և նուիրական գուրանով: Եւ մուածում եմ. ինչքա՞ն է սիրում հեղինակը այս եր-

կիրճ ու նրա հերկողին, ինչքա՞ն շատ, որ նոյն բուխ զգացումով վարակում է ձեզ: Ես երբ մօտենում եմ նրան, ծանօթանում եմ նրա զգացումների ու մտերի հետ, դուք տեսնում եք, որ իրաւ, այդ նկարները նրա հոգուց են դուրս բխել, այդ նկարների նախատիպերը, Հայաստանը, գորգուրուած, սիրուած են՝ նրա հոգում այնքան կարողին, այնքան գեղեցիկ:

Նկարիչ Սարեանը արուեստով ու կեանենվ նուիրուած է. Հայաստանի վերածննդին ու վերաշինուանը, դարերի արևաների մեջ փշրուած մեր ժողովրդի ազգայնացմանն ու հայացմանը»<sup>7</sup>:

Հարկ է ասել նաև այն, որ Սարեանի գրոյցները իսահակեանի հետ, նրա պատմածները Հայաստանի առօրեայի մասին նպաստեցին, որ իսահակեանը հայրենիք վերադառնալու որոշում կայացի: Այդ մասին է վկայում Մատեանին գրուած Սարեանի նամակի հետեւեալ հատուածը. «Այստեղ, վենետիկում, ապրում է Աւետիք Խահակեանը: Շատ ուրախացաւ իմ գալուս, որ վերջապէս կենդանի մարդ է գալիս, եւ, լսելով իմ անկեղծ գովասնեները մեր երկոր շինարարների հասցեին, աւելի լրցուեց ցանկութեամբ վերադառնալու Հայաստան եւ մասնակից լինելու մեր երկորի վերածնութեան գործին:

Դու երեւի ծանօթ ես հետը անձամբ, գուցէ կարելի է մի կերպ յաջողացնել նրա գալը» (1924 թ., յունիս-յուլիս, Վենետիկ):

Բացի արդէն նշուած գործերից՝ «Հայաստան», «Լեռնային բնանկար», «Գունագեղ բնանկար», «Երեւան», «Եղիշէ Զարենցի դիմանկարը», Սարեանը վենետիկում ցուցադրել էր «Արեւային բնանկարը», «Միջօրէի լոռոթիւնը», «Նատիւրմորտ», «Աշուն Յովիանիսիսանի» եւ «Դերասանուի Խումաշեանի» դիմանկարները եւ երկու գրաֆիկական աշխատանք:

Ցուցահանդէսի հայկական բաժնում ներկայացուած էին նաև Ե. Թաղեւուսանի «Արագածն է իր լանջերով» նկարը, Փ. Թերլեմէգեանի «Վարագայ լեռն ու Վանայ լինը», Վ. Սուրէնեանցի նկարները հայ գաղթականների մասին, Տարագրոսի գարդ-ջրանկարը՝ արեւելեան գորգի ճոխ երանգներով, Ս. Առաքելեանի երկու բնանկար:

Բիենալէի ռուսական եւ հայկական կերպարուեստը ներկայացնող բաժինները մեծ հետաքրքրութիւն առաջացրեցին թէ՝ քրն-

<sup>7</sup> Ա.Ի.ԵՏԻՐ ԽՍԱՀԱԿԵԱՆ, նոյն գրքի՝ էջ 113:

նադատների, եւ թէ այցելուների մօտ: Դրանք գրաւեցին առաջին տեղը վաճառուած նկարների թուով, որոնց մէջ էր նաեւ Զիոնի վաճանի Շաբամիլլայի կողմից գնուած Սարեանի «Երեւան» (1924 թ., կտ. իւլ., 69x69) կտաւը:

Աւետիք Խսահակեանի որդու՝ Վիգէն Խսահակեանի «Հայրս» գիրք-յուշագրութիւնը շատ արժէքաւոր ու նոր տեղեկութիւններ է տալիս վենետիկեան Բիենալիէի ցուցահանդէսի եւ Սարեանի՝ Վենետիկում անցկացրած օրերի վերաբերեալ: Յուշերը վերակենդանացնուած են 1924 թ. յունիս-յուլիս ամիսների վենետիկեան կեանքը իր ողջ գունագեղութեամբ, եռուզեռով, անցուղարձով եւ այս Փօնի վրայ նկարագրուած են երկու հայ վարպետների հանդիպումները, որոնք հիմք պիտի գառնային մեծ ու անգուգական բարեկամութեան: Խնչակէս վկայում է Վիգէն Խսահակեանը, Խսահակեանն ու Սարեանը անբաժան էին իրարից: «Միասին այցելեցին Բիենալէ ցուցահանդէսը, որը Սարեանը ուզում էր տեսնել ամրողութեամբ:

Միայն խտալական տաղաւարը բաղկացած էր 48 սրահներից, կային նաև ուր օտարազգի տաղաւարներ, որոնք բոլորն էլ պէտք էր անպայման դիտել: Ժամեր շարունակ Սարեանը հօրս հետ այցելում էր տարբեր տաղաւարներ, ցածր ճայնով, ինքն իրեն համար գնահատումներ անում, իսկ հայրս աւելի զգացմունքային, բարձրաձայն յայտնում էր իր տպաւորութիւնները: Երբ յոգնում էին, գնում էին սրբարան, մի քանի րոպէ հանգստանում եւ նորից, նոր ուժով շարունակում արշաւը... [...]

Սարեանը ուզում էր տեսնել ողջ Վենետիկը, ոչինչ բաց չը-ողնել: Հոչակաւոր պալատների այցելութիւնից յետոյ ուշադիր նայում, զննում էր նաև ամենասպիրական վենետիկեան տները, ուր ապրում էր հասարակ ժողովուրդը, նրա գնահատող աչքը «ամենախողնուկ շինութեան մէջ անզամ մի արժեքաւոր մանրամասն էր Եշմարում՝ մի պատուհան, մի արանիկ, մի շամուտք, մի շրիոր: Մենք էլ նրա հետ, կարծես թէ Վենետիկը երկրորդ անգամն էինք տեսնում»<sup>8</sup>:

**Շատ հետաքրքիր հանդիպում է տեղի ունեցել Վենետիկից ոչ հեռու գանուող Լիզոյ կղզում Սարեանի եւ Դեագիլեւի միջեւ, որի ականատեսն է եղել Վիգէն Խսահակեանը: Խսահակեանը**

<sup>8</sup> Վիգէն ԽՍԱՀԱԿԵԱՆ, Հայրս, հ. 2000, էջ 113, 115:

Մարեանին մի երկու օրով Լիդոյ էր հրաւիրել՝ Աղրիատիկի հրասարանչ լողափը վայելելու։ Լողալուց յետոյ նրանք քայլելով հասան Լիդոյի ամենաչքեղ «Էլսինոր» հիւրանոցը եւ տէրասի կաֆեներից մէկում որոշեցին մի բաժակ սուրճի նստել։

«Կովկասեան արտաքին ունեցող մի մարդ մօտեցաւ մեր սեղանին, - զրում է Վիգէն Խսահակեանը, - եւ ջերմօրէն քարեւեց Սարեանին։ Սերգեյ Դիագիլեւն էր, զարմացել էր տեսնելով Սարեանին Վենետիկում, որին նաևազում էր դեռեւս Ռուսաստանից։ [...] Այժմ նա խոալիա հիւրախաղերի էր թերել իր հոչակաւոր «Ռուսական բալետ»-ը։ Դիագիլեւը ագահօրէն հարց ու փորձ էր անում Սարեանին, եւստաքրքրում Ռուսաստանում ապրող նկարչների վիճակով, եւ յանկարծ՝ զրոյցի ընթացքում, նրա մօտ մի միտք ծագեց եւ նա ասաց Սարեանին, որ շատ է փափագում արեւելեան մօտիւներով մի վառ ու գունեղ ներկայացում պատրաստել՝ ասենք թէ «Շահներկադէն» [...] եւ առաջարկեց Սարեանին, որ նա էլ թեմական ձեւառորումը կատարի թնականարար բարձր վարձատրութիւն խոստանալով։ Սակայն Սարեանը առանձնապէս չոգեւորուեց այս գայքակողիչ, ամէն մի անուանի նկարչին պատիւ թերող առաջարկութեամբ։ Անշուշտ նա չէր մոռանում իր խորհրդային բաղաբացի լինելու հանգամանքը»<sup>9</sup>։

Յաջորդ օրը Լիդոյից նաւով վերադառնալիս՝ Խսահակեանը եւ Սարեանը նորից են հանդիպում Դեագիլեւին, այս անդամ յայտնի ոռու պարուճի, «Ռուսական բալետի աստղ» Աննա Պաւլովայի ուղեկցութեամբ։

Աննա Պաւլովան ասաց, որ եկել են Վենետիկ մի քանի օրով հանգստանալու, այցելել է Բիենալէ եւ շատ է հաւանել Սարեանի կտուները, որոնք բոլորից տարրերում են իրենց արուեստով, գոյներով եւ մանաւանդ զերծ են իրեն այնքան խորը, պրոպագանդիստական տեսդենցներից։ Ասաց, որ պարաստում է «Լենների թագաւորի եօր աղջիկները»՝ մի բալետ Ալեքսանդր Սպինդիարեանի երաժշտութեան հիման վրայ, եւ անսահման գոհ կը լիներ, եթէ Սարեանը համաձայնէր այդ ներկայացման համար կոստիւմների մի բանի էսիդ կատարել։ Սարեանը, որը մի առանձնակի նրան սիրալիքութիւն էր հանդէս թերում տիկին Պաւլովայի հանդէպ, ասաց. «Մեծ սիրով ձեռնամուխ կը լինեի ձեր մուայդացման իրագործմանը,

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 139-140։

ինչպէս նաեւ շատ կը ցանկանայի նկարել Զեր պորտրէն, բայց ցաւօք, ժամանակ չի մնացել, մի բանի օրից պէտք է մնկ-նեմ»<sup>10</sup>:

Վենետիկան ցուցահանդէսը Սարեանի կեանքում բացառիկ զեր խաղաց: Նախ եւ առաջ այն հնարաւորութիւն ընձեռեց նը-կարչին առաջին անգամ այցելել Եւրոպան, տեսնել Գերմանիայի եւ Խտալիայի թանգարանները, առնչուել Արեւմուտքի գեղարուեստական կեանքին: Սարեանը գրի առաւ այն ամէնը, ինչ տպաւորել ու յուզել էր իրեն, եւ վերադառնալուն պէս իր նօթե-րը տպագրեց «Նորֆ» հանդէսի 1925 թ. 5-6 միաւորուած համարում:

Անդրադառնալով խտալական հին ու նոր արուեստին, Սա-րեանը գրում է նաեւ իրեն՝ որպէս Հայաստանում հնութիւնների պահպանութեան գործի հիմնադրին, խորապէս յուզող ցաւու խըն-դիրների մասին: Նա մասնաւորապէս գրում է. «Թանգարանային եւ յուշարձանների պահպանման գործն Խոտալիայում հիանալի կերպով կազմակերպուած է: Կայ յատուկ մինհստրութիւն, որ այդ յուշարձանների ուսումնասիրութեան, պահպանման, վե-րականգնեան, հաւաքման եւ այլ գործերն է վարում, միաժա-մանակ ամէն տեսակի յարմարութիւններ ստեղծելով տուրիստ-ների համար, որոնք հեղեղում են Խոտալիան եւ այդ աղքատ երկրին հսկայական եկամուտ են տալիս:

Ինչքան լաւ կը լիներ, եթէ մեր երկրում, որն այնպէս հարուստ է զանազան դարաշրջաններին պատկանող հնութեանց յուշարձաններով, որոնք զանազան պատրուակներով, ի հարկէ գլխաւորապէս անկուլուրականութեան ու տգիտութեան պատ-ճառով, անինայ կերպով ոչնչացւում են ամէնուրելք, գոնե մի միլիոններորդականն արուեր այն ամէնի, որ Խոտալիան է անում»:

Սարեանի «Ճամփորդական տպաւորութիւնները» 20-ական թուականների հայ ընթերցողի համար հազուագիւտ հնարաւո-րութիւն էին ծանօթանալու արեւմտաեւրոպական եւ ռուսական արուեստի առանձին անունների, ուղղութիւնների հետ, հաղոր-դակցուելու արուեստի միջազգային ցուցահանդէսի մթնոլորտին, Սարեանի աչքերով տեսնելու Վենետիկը, Ֆլորենցիան, խտալա-կան վերածննդի վարպետների անմահ ստեղծագործութիւնները:

<sup>10</sup> Նոյն տեղում, էջ 151:

**Սարեանը հրաժեշտ է տալիս իտալիային, ընդմիշտ սիրահարուած մնալով զասական արուեստի բնօրրան այդ երկրին:** Նա խոստովանում է Լուսիկ Սարեանին զրուած իր նամակում: «Ամենահասարակ բանն ինչ-որ լինի, հիանալի է եւ անկրկնելի, ուղղակի ուրիշ բան է, Լուսինչիո, կարծես թէ աստուածներն են այս բոլորը առեղծողները, այլ ոչ թէ մարդիկ: Գերմանիան մարդկային է, իսկ իտալիան աստուածային» (1924, յունիսի 8, Վենետիկ)՝:

Վենետիկը ցնցող տպաւորութիւն թողեց Սարեանի վրայու, թէեւ նկարիչը իր ստեղծագործութեան մէջ չանդրագարձաւ այդ հէքիաթային քաղաքին, բայց եւ այնպէս կերտեց նրա անմոռանալի կերպարը իր գրառումներում: Ահա թէ ինչպէս է Սարեանը թափանցել Վենետիկի հութեան մէջ. «Վենետիկը իրականացած հէֆիար է: Ամէն ինչ աներեւակայելի չափերով ներդաշնակ, ոճաւոր և գեղեցիկ է Վենետիկում: Գօնդօլը, կարծես կենդանի բռչուն, գլուխ հպարտօրէն բարձրացրած սահում է ջրանցքներով, անցնում պալատների ու տների մօտից, որոնք ուղղակի ջրի յատակից են բարձրանում: [...] Ի դեպ, մոտորային նաւակներն ամենենին չեն սագի Վենետիկին: Վենետիկը բանգարան է: Քաղաքակրթութեան բոլոր նորամուծութիւնները անեներդաշնակութիւն կը մոցնեն նրա մէջ: Վենետիկը չպէտք է խախտի իր ոճը, այլապէս կը կորցնի իր ողջ հրապոյըք: Նրա ոճը միաժամանակ նրա կեանքի ոիքմն է: Վենետիկին չի սագի ջղային կեանքն ու արագ քափը: Նրա ոիքմը ծովածոցի ոիքմն է՝ միշտ ամդորր և մակրներացութիւնն ու տեղատուութիւնն անենկատելի: [...] Վերացրէք գօնդուները, տրադիցինն ծողովդրական զրուանք-տօները, Պիացցա Պիացետուայի ամենօրեայ սիմֆոնիկ համերգները և այլն, և Վենետիկը կը դառնայ մի դատարկ տուփ»<sup>11</sup>:

Իտալիա կատարած ուղեւորութիւնը Սարեանին հնարաւորութիւն ընձեռեց ծանօթանալու ոչ միայն զասական արուեստի ստեղծագործութիւնների հետ, այլև ժամանակակից գեղանկարչութեան տարբեր հոսանքների, նոր անունների և ուղղութիւնների հետ, առնչուելու Եւրոպայի գեղարուեստական կեանքի անցուղարձին, հանդիպելու հին ու նոր բարեկամներին՝ Աւետիք

<sup>11</sup> Լուսիկ Սարեանին ուղղուած նամակները պահպանում են Մ. Սարեանի բնանեկան արխիւում:

<sup>12</sup> Մ. Սարեանի նոյն գրքի՝ էջ 173-174:

իսահակեան, էղգար Շահին, Սերգեյ Դիագիլեւին եւ, ինչը շատ կարեւոր էր, ներկայացնելու իր վերջին տարիների աշխատանքը նոր ձեւերի եւ միջոցների տանջալից որոնումների արգասիքը, թիենալի նման հեղինակաւոր միջազգային ցուցահանդէսին:

Սարեանը, հետեւելով իր ներքին ձայնին, համոզուած գր-նում էր առաջ, բայց նրան, որպէս ստեղծագործողի կարեւոր էր նաև իր որոնումների, իր արուեստի գնահատումը, այն էլ միջազգային ցուցահանդէսի բարձր չափանիշներով։ Եւ նա ստացաւ այդ գնահատականը տարբեր հեղինակաւոր արուեստագէտների կողմից, որոնցից մէկը իտալացի քննադատ Ջուզեպէ Սպրովիէրին էր։ "Il Mondo" թերթում (1924 թ., օգոստոսի 8) նա մասնաւորապէս գրեց. «Նրա նկարները հզօր եւ ինքնուրոյն տեմպերամենսի այնպիսի նոյն արտայայտութիւն են ներկայացնում, որ չեն կարող չքողնել ամենաուժեղ տպաւորութիւն դիտողի վրայ։ Թէ՛ նրա գոյները, եւ թէ գծանկարը չափազանց ուշագրաւ են ժամանակիս արուեստի որոնումների տեսակետից։ [...] Ներկայում վենետիկում, ՍՍՀՄ պատիլինում, նրա նկարներին յատկացնուած անկիւնը ամենայն իրաւամբ կարելի է համարել ամենահետաքրքիրներից մէկը ոչ միայն այդ պատիլինում, այլ եւ ամբողջ ցուցահանդէսում»<sup>13</sup>:

Աւելի բարձր գնահատական, այն էլ միջազգային ցուցահանդէսը հիւրբնկալող ժողովրդի ներկայացուցչի կողմից, գժուարէ պատկերացնել։

Սարեանը հայրենիք վերադարձաւ իսանդավառուած եւ ստեղծագործելու անյագ ծարաւով համակուած։

ՈՌԻԶԱՆ ՍԱՐԵԱՆ

<sup>13</sup> Il Mondo, 24 օգոստոսի, 1924 թ.։